

ԲԱԶՈՒԿԸ Ր ԻԺԵՐԻՆ

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԱԹՈՒՆ ՆՍՏԵՑՆԵԼ ԲՈՒԽԱՐԻ ՆԻՆ, ՌԻԿՈՎԻՆ, ՈՒԳԼԱՆՈՎԻՆ

ՄՈՍԿՎԱ, 27. — Աջ թափթիուկների հետ արոցկիստական բանդիաների ունեցած կապը, վոր հաստատվեց արոցկիստական հակախորհրդային կենտրոնի դատավարութեան ընթացքում, բուն դայրույթ առաջացրեց Ստալինի անվան ավտոգործարանի (Մոսկվա) 45 հազարանոց կոլեկտիվի մեջ:

Բոլոր ցեխերում տեղի ունեցան բազմամարդ միտինգներ: Շտամպի և մամլելու ցեխի միտինգում հանդես գալով դարբին ընկեր Լուկյանովը հայտարարեց.

— Մեզ համար պարզ է, վոր վոչ միայն արոցկիստները, այլև աջերը — Բուխարինը, Ռիկովը, Ուզլանովը և այլն — ունեցել են իրենց ընդհատակյա հակահեղափոխական կենտրոնը: Մենք այժմ գիտենք, վոր աջերը, ինչպես և արոցկիստները, վոչ մի հենարան չգտնելով ժողովրդի մեջ, նույնպես դիմել են դավաճանութեան, տեռորի, բայց նրանք մերկացվեցին և մենք պահանջում ենք դասի տալ նրանց:

Միտինգում ընդունված բանաձևի մեջ ասված է.

«Տրոցկիստական հակախորհրդային կենտրոնի անդամ ստոր դավաճանների հետ միասին աջ ճիւղայինը ել պատրաստվում էին սպանել մեր Հայրենիքի լավագույն մարդկանց, մեր ախրելի առաջնորդներին, սմբողջ աշխարհի աշխատավորութեան իմաստուն առաջնորդ ու բարեկամ մեր հարուզատ Ստալինին:

Մեր յերկիրն սմենաբարձր, իսկական հումանիզմի յերկիր է: Բայց մեր ժողովուրդն անազոք է դեպի թշնամին, նա յերկրի յերեսից կճնջի բոլոր նրանց, սվքեր վորձում են ձեռք բարձրացնել նրանվաճումների վրա: Մենք պահանջում ենք մեղադրական աթուղի նստեցնել դավաճանութեանը, մատուցեցնել տեռորին մեղաակից աջ թափթիուկներին՝ Բուխարինին, Ռիկովին, Ուզլանովին և մյուսներին»:

ՎՈՉ ՄԻ ԴԹՈՒԹՅՈՒՆ ՓԱՇԻՍՏԱԿԱՆ ՎԱՐՉ- ԿԱՆՆԵՐԻՆ

Հունվարի 27-ին Համարչուի հիմնարկ-ձեռնարկութեանններում և շքանի գյուղերում տեղի ունեցան բանվորների, ծառայողների, գյուղի աշխատավորութեան բազմամարդ միտինգներ՝ հայրենիքի ստոր դավաճանների, հակախորհրդային արոցկիստական կենտրոնի դատավարութեան աթիւղ: Բոլորը բուն ցատումով ու մեծադույն նադկանքով անարգանքի աշուձին են գամում այդ յերիցս անարգ հակահեղափոխական արոցկիստական սրիկաներին, վորոնց արարքներն իրենց ստորութեամբ դերազանցում են այն սմենը, ինչ որ մինչև այժմ գիտեմարդկութեան պատմութեանը:

«Այսոր, — ասում է Դարդալուի կոլտնտեսական Կ. Դանիելյանը, — կոլտնտեսութեան շնորհիւ մենք սարում ենք լավ և հարստանում ենք տարեց տարի: Մեր յերջանկութեանը՝ կոլտնտեսութեանը՝ կամենում էին կործանել արոցկիստական սրիկաները: Նրանք ժողովրդի դավաճաններ են և սլեաք է դեղակահարսվեն»:



ԱԼԼԱՉՎԵՐԴԻ, 27. — Հանքերում, պղնձածուլական գործարանում, բաղմաթիւ կոլտնտեսութեանններում տեղի ունեցան թոուցիկ միտինգներ, վորտեղ բանվորները, կոլտնտեսականները բանաձևեր ընդունեցին՝ սլահանջելով վոչնչացնել Փաշխտական լիտի վարձկաններին, հակահեղափոխական արոցկիստ-սրիկաներին:

«Յերիցս անարգ արոցկիստները՝ հայրենիքի դավաճանները, — ասում են Լենինյան հանքերի բանվորները, — իրենց հրեշավոր վոճրագործութեանների համար պետք է վոչնչացվեն»: